ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«15» «հունվարի» 2025 թվական № 22-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2025 թվականի հունվարի 13-ի N 42/45.45/854 գրությամբ ներկայացված համաձայնությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանով հաստատված 279-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության պետի (ծածկագիր՝ 15-32.11-Ղ3-1) **«2. Պաշտոնի բնութագիրը»** գլուխը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմաններում վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում քաղաքականության մշակումը և ռազմավարությունների մշակմանն ու իրականացմանը մասնակցությունը.

2. ապահովում է թափոնների պետական հաշվառումը.

3. ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտին վերաբերող իրավական ակտերի մշակումը.

4. համակարգում է Հայաստանի Հանրապետության տարածքում առաջացող արտադրական (այդ թվում՝ ընդերքօգտագործման) ու սպառման թափոնների ըստ վտանգավորության աստիճանի դասակարգումը.

5. ապահովում է թափոնների գոյացման, դրանց վնասակար ազդեցության նվազեցման, շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից թափոնների շահավետ օգտահանման, օգտագործման աստիճանակարգության քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքները.

6. համակարգում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում միջազգային՝ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի, «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի, «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին», «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան և «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումը.

7. ապահովում է Քիմիական նյութերի միջազգային կառավարման ռազմավարական մոտեցման (SAICM) գործընթացին Վարչության իրավասությունների շրջանակներում մասնակցությունը.

8. ապահովում է թափոնների պետական կադաստրի վարման աշխատանքներին մասնակցությունը.

9. ապահովում է թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունների և թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկների վերաբերյալ կարծիքների տրամադրումը.

10. ապահովում է Հայաստանի Հանրապետության վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության վկայագրի նախագծերի վերաբերյալ քիմիական նյութերի և թափոնների մասով եզրակացությունների տրամադրումը.

11. ապահովում է ընդերքօգտագործման թափոնների կառավարման գիտելիքահենք ու նորարար նախաձեռնությունների վրա հիմնված պետական ծրագրերի, քաղաքականությունների և ռազմավարությունների մշակմանը մասնակցությունը.

12. ապահովում է Վարչության մասնակցությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման և զարգացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

13. ապահովում է շրջակա միջավայրի վիճակի, ինչպես նաև թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի իրականացման համար առաջարկությունների ներկայացումը.

14. ապահովում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման տնտեսական մեխանիզմների մշակման աշխատանքներին վարչության իրավասությունների շրջանակներում մասնակցությունը.

15. ապահովում է տնտեսության մեջ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից լավագույն հասանելի տեխնոլոգիաների օգտագործման խթանման քաղաքականության մշակմանը մասնակցությունը.

16. ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին մասնակցությունը՝ վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման մասով.

17. ապահովում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրումը և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմումը.

18. ապահովում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի տրամադրումը.

19. ապահովում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը, իրականացվող ծրագրերի համակարգմանը, ներկայացված հաշվետվությունների, նախատեսվող և/ կամ իրականացվող ծրագրերի վերաբերյալ կարծիքի տրամադրման գործընթացին մասնակցությունը.

20. ապահովում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության տրամադրման գործընթացին մասնակցությունը.

21. ապահովում է շրջակա միջավայրի վիճակի, շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործության և դրանց աղբյուրների բացահայտման, ուսումնասիրության ու մոնիթորինգի (դիտանցի) չափորոշիչների մշակման աշխատանքներին մասնակցությունը.

22. ապահովում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին մասնակցությունը՝ Վարչության իրավասությունների շրջանակում.

23. ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակման աշխատանքներին մասնակցությունը՝ Վարչության իրավասությունների մասով.

24. ապահովում է Վարչության իրավասությունների սահմաններում այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների տրամադրումը.

25. ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակման և բյուջետային գործընթացի իրականացման աշխատանքներին մասնակցությունը.

26. ապահովում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտի էկոլոգիական իրազեկման, մշակույթի, դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների, էկոլոգիական գիտության և կրթության ռազմավարության մշակման գործընթացին մասնակցությունը.

27. ապահովում է քաղաքացիների ներկայացրած՝ վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտին առնչվող առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և պատասխանների տրամադրման գործընթացին մասնակցությունը.

28. ապահովում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին մասնակցությունը.

29. ապահովում է Վարչության աշխատանքային ծրագրերի ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը:

Իրավունքները

• տարբեր հնարավոր տեղեկատվական աղբյուրներից օգտվել, պետական և ոչ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու միջոցով ծանոթանալ միջազգային փորձին.

• այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից, ինչպես նաև Նախարարության այլ ստորաբաժանումներից իր պարտավորությունների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր պահանջել և ստանալ.

• աշխատանքներին այլ մասնագետներ, փորձագետներ և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավել, ինչպես նաև Կոնվենցիաների իրականացման ղեկավար խորհուրդներ ստեղծելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել.

• խորհրդակցություններ, քննարկումներ կազմակերպելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնել.

• ոլորտային քաղաքականության ձևավորմանն ուղղված գործողությունները և ծագած խնդիրները քննարկել, դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել.

• թափոնների հաշվառման գործընթացի իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր ստանալ.

• իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացում ի հայտ եկած խնդիրներ քննարկել և դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել.

• Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ այլ ստորաբաժանումներից տեղեկատվություն ստանալ, կարծիքների ամփոփման ընթացքում ի հայտ եկած խնդիրներ քննարկել և դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել.

• շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի ուսումնասիրության արդյունքում վերհանված ոլորտային անհամապատասխանությունների վերացման նպատակով լրացուցիչ տեղեկատվություն պահանջել.

• «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի և«Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով տարբեր գերատեսչություններից, գիտությունների ազգային ակադեմիայից, հասարակական կազմակերպություններից տեղեկատվություն պահանջել և ստանալ նշված կոնվենցիաների հաշվետվությունների մշակման, ազգային գործողությունների ծրագրի վերանայման/թարմացման և կոնվենցիաների քարտուղարություն ներկայացնելու համար.

• վերահսկել վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում միջազգային՝ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի, «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի, «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին», «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան և «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքները.

• «Քիմիական նյութերի և թափոնների կառավարման ազգային ակնարկի (պրոֆիլ)» մշակման, պարբերաբար վերանայման և նորացման համար տարբեր աղբյուրներից տեղեկատվություն ստանալ:

Պարտականությունները

• մշակել վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման քաղաքականությունը.

• վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտի օրենսդրական դաշտի ուսումնասիրության, վերլուծության և ոլորտում առկա բացերի ու անհամապատասխանությունների բացահայտման, վերհանման, քննարկման աշխատանքներ կազմակերպել.

• կազմակերպել Հայաստանի Հանրապետության վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության վկայագրի նախագծերի ուսումնասիրության, վերլուծության գործընթացը և նախագծերի վերաբերյալ վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ մասով եզրակացություններ տրամադրել.

• կազմակերպել թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունների և թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկների ուսումնասիրության և վերլուծության գործընթացը և դրանց վերաբերյալ կարծիքներ տրամադրել.

• ձևավորել Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման միջգերատեսչական հանձնաժողով և վարել Հանձնաժողովի նիստերը, կազմակերպել կայուն օրգանական աղտոտիչների վերաբերյալ աշխատաժողովներ, գիտաժողովներ, միջոցառումներ, մասնակցել Կոնվենցիայի կողմերի համաժողովներին.

• Հայաստանի Հանրապետությունում «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով մշակել, թարմացնել միջազգային առևտրում արգելված կամ խիստ սահմանափակված թունաքիմիկատների և արդյունաբերական քիմիական նյութերի ցանկերը, իրազեկել այդ նյութերի վտանգավոր հատկությունների և ազդեցության վերաբերյալ.

• «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ հաշվետվություններ և ինքնագնահատման զեկույցներ նախապատրաստել և պարբերաբար ներկայացնել Կոնվենցիայի քարտուղարություն, Կոնվենցիայի շրջանակներում աշխատաժողովներ, սեմինարներ կազմակերպել.

• ձևավորել Հայաստանի Հանրապետությունում «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի իրականացման ղեկավար խորհուրդ և վարել Խորհրդի նիստերը, մասնակցել Կոնվենցիայի կողմերի համաժողովներին և անդամակցել Կոնվենցիայի բյուրոներին, ղեկավար կոմիտեներին, Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ հաշվետվություններ կազմել և պարբերաբար ներկայացնել Կոնվենցիայի քարտուղարություն, մշակել Կոնվենցիայից բխող իրավական ակտեր.

• Հայաստանի Հանրապետության վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության վկայագրի նախագծերի վերաբերյալ վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների մասով եզրակացություններ տրամադրել.

• Վարչության իրավասությունների սահմաններում այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք տրամադրել.

•շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի վերաբերյալ Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիք տրամադրել.

•հետևել Քիմիական նյութերի միջազգային կառավարման ռազմավարական մոտեցման գործընթացին Վարչության իրավասությունների շրջանակներում մասնակցությանը:»:

2) Հրամանով հաստատված 280-րդ, 443-րդ և 453-րդ հավելվածներով՝ շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետների (ծածկագիր՝ 15-32.11-Մ2-(1,2,3)) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի **«2. Պաշտոնի բնութագիրը»** գլուխ շարադրել նոր խմբագրությամբ.

«**2. Պաշտոնի բնութագիրը**

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմաններում իրականացնում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում քաղաքականության մշակումը և ռազմավարությունների մշակմանն ու իրականացմանը մասնակցությունը.

2. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտին վերաբերող իրավական ակտերի մշակումը.

3. մասնակցում է թափոնների պետական հաշվառման իրականացման աշխատանքներին.

4. իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում առաջացող արտադրական (այդ թվում՝ ընդերքօգտագործման) ու սպառման թափոնների՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգումը.

5. իրականացնում է Հայաստանի Հանրապետության վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության վկայագրի նախագծերի վերաբերյալ քիմիական նյութերի և թափոնների մասով եզրակացությունների տրամադրումը.

6. իրականացնում է թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունների և թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկների վերաբերյալ կարծիքների տրամադրումը.

7. իրականացնում է թափոնների գոյացման, դրանց վնասակար ազդեցության նվազեցման, շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից թափոնների շահավետ օգտահանման, օգտագործման աստիճանակարգության քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքները.

8. իրականացնում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրումը և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմումը.

9. իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի տրամադրումը.

10. մասնակցում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում միջազգային՝ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի, «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի, «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին», «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան և «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքներին.

11. Վարչության իրավասությունների շրջանակներում մասնակցում է Քիմիական նյութերի միջազգային կառավարման ռազմավարական մոտեցման (SAICM) գործընթացի աշխատանքներին.

12. մասնակցում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, իրականացվող ծրագրերի համակարգմանը, ներկայացված հաշվետվությունների, նախատեսվող և/կամ իրականացվող ծրագրերի վերաբերյալ կարծիքի տրամադրման աշխատանքներին.

13. իրականացնում է Վարչության իրավասությունների սահմաններում այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների տրամադրումը.

14. մասնակցում է ընդերքօգտագործման թափոնների կառավարման գիտելիքահենք ու նորարար նախաձեռնությունների վրա հիմնված պետական ծրագրերի, քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման և ներդրման աշխատանքներին.

15. մասնակցում է թափոնների պետական կադաստրի վարման աշխատանքներին.

16. մասնակցում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման տնտեսական մեխանիզմների մշակման աշխատանքներին.

17. իրականացնում է շրջակա միջավայրի վիճակի, ինչպես նաև թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի համար առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

18. մասնակցում է շրջակա միջավայրի վիճակի, շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործության և դրանց աղբյուրների բացահայտման, ուսումնասիրության ու մոնիթորինգի (դիտանցի) չափորոշիչների մշակման աշխատանքներին.

19. մասնակցում է տնտեսության մեջ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից լավագույն հասանելի տեխնոլոգիաների օգտագործման խթանման քաղաքականության մշակմանն ու իրականացմանը.

20. մասնակցում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին՝ իր իրավասությունների շրջանակում.

21. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում մասնակցում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման և զարգացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներին.

22. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակման աշխատանքներին՝ Վարչության իրավասությունների մասով.

23. մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին՝ վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման մասով.

24. մասնակցում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության տրամադրման գործընթացին.

25. մասնակցում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտի էկոլոգիական իրազեկման, մշակույթի, դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների, էկոլոգիական գիտության և կրթության ռազմավարության մշակման գործընթացին.

26. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակման և բյուջետային գործընթացի իրականացման աշխատանքներին.

27. մասնակցում է քաղաքացիների ներկայացրած՝ վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտին առնչվող առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և պատասխանների տրամադրման գործընթացին.

28. մասնակցում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին.

29. իրականացնում է Վարչության աշխատանքային ծրագրի և Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը:

Իրավունքները

• ուսումնասիրել միջազգային փորձը և դրա ներդրմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել և քննարկել.

• այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից, ինչպես նաև Նախարարության այլ ստորաբաժանումներից իր պարտավորությունների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր պահանջել և ստանալ.

• վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտի իրավական դաշտում ի հայտ եկած խնդիրների, բացերի վերացմանն ուղղված առաջարկներ ներկայացնել.

• շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի ուսումնասիրության արդյունքում վերհանված ոլորտային անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել և քննարկել:

Պարտականությունները.

• մասնակցել վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում ռազմավարական փաստաթղթերի մշակմանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում մշակել վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծեր.

• վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում միջազգային փորձի ներդրման նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով իրավական ակտերի նախագծեր նախապատրաստել.

• ժամկետանց քլորօրգանական թունաքիմիկատների անվտանգ կառավարման/ոչնչացման, պոլիքլորացված բիֆենիլներ պարունակող յուղերի և սարքավորումների վնասազերծման/ոչնչացման պայմանների սահմանման, դիօքսինների և ֆուրանների արտանետումների կրճատման, առկա լավագույն տեխնոլոգիայի կամ բնապահպանական իմաստով լավագույն գործունեության ներդրման, նոր կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) հայտնաբերման, հաշվառման, դրանց թափոնների անվտանգ կառավարման նպատակով իրավական ակտեր մշակել.

• կատարել Կայուն օրգանական աղտոտիչների ազգային գործողությունների ծրագրի մշակման, վերանայման և թարմացման աշխատանքներ.

• դասակարգել թափոններն ըստ վտանգավորության աստիճանի.

• ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության վկայագրի նախագծերը և դրանց վերաբերյալ քիմիական նյութերի և թափոնների մասով եզրակացություններ կազմել.

• ուսումնասիրել թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունները և թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկները և դրանց վերաբերյալ կարծիքներ կազմել.

• ուսումնասիրել Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերը և դրանց վերաբերյալ Վարչության իրավասությունների սահմաններում մասնագիտական կարծիք ձևավորել.

• ուսումնասիրել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերը և դրանց վերաբերյալ Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիք կազմել.

• մասնակցել վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում միջազգային՝ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին»

Ստոկհոլմի, «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի, «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին», «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան և «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքներին:»:

3) Հրամանով հաստատված 281-րդ հավելվածով՝ շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-32.11-Մ4-1) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը»** գլուխը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

1. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում քաղաքականության մշակմանը և ռազմավարությունների մշակման ու իրականացման աշխատանքներին.

2. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտին վերաբերող իրավական ակտերի մշակման աշխատանքներին.

3. իրականացնում է թափոնների պետական հաշվառման աշխատանքները.

4. մասնակցում է թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունների և դրանց հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկների վերաբերյալ կարծիքների տրամադրման աշխատանքներին.

5. մասնակցում է թափոնների գոյացման, դրանց վնասակար ազդեցության նվազեցման, շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից թափոնների շահավետ օգտահանման, օգտագործման աստիճանակարգության քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին.

6. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված Վարչության իրավասությունների սահմաններում վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակման և բյուջետային գործընթացի իրականացման աշխատանքներին.

7. մասնակցում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի տրամադրման աշխատանքներին.

8. մասնակցում է Վարչության իրավասությունների սահմաններում այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների տրամադրման աշխատանքներին.

9. մասնակցում է վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում միջազգային՝ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին»

Ստոկհոլմի, «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի, «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին», «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան և «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքներին.

10. Վարչության իրավասությունների շրջանակներում մասնակցում է Քիմիական նյութերի միջազգային կառավարման ռազմավարական մոտեցման գործընթացի իրականացմանը:

Իրավունքները.

- ուսումնասիրել միջազգային փորձը և դրա ներդրմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել և քննարկել.
- վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների կառավարման ոլորտի իրավական դաշտում ի հայտ եկած խնդիրների, բացերի վերացմանն ուղղված առաջարկներ ներկայացնել.
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի ուսումնասիրության արդյունքում վերհանված ոլորտային անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել և քննարկել.
- մասնակցել «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի և «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաների շրջանակներում կազմակերպվող միջոցառումների նախապատրաստական աշխատանքներին.
- «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի դրույթների իրականացման նպատակով հաշվառել սնդիկ պարունակող թափոնները:

Պարտականությունները.

- մասնակցել վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների կառավարման ոլորտում իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին.
- ուսումնասիրել և վերլուծել կազմակերպությունների կողմից ներկայացվող «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» ձև N1-թափոն տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունների տվյալները, բացահայտել առկա անճշտությունները, մուտքագրել և ամփոփել թափոնների առաջացման վերաբերյալ տվյալները, ստեղծել տեղեկատվական բազա.
- միջազգային փորձի ներդրման նպատակով մասնակցել իրավական ակտերի նախագծերի նախապատրաստմանը.
- մասնակցել թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունների և թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկների ուսումնասիրմանը և դրանց վերաբերյալ կարծիքների պատրաստմանը.
- մասնակցել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի ուսումնասիրմանը և դրանց վերաբերյալ Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի կազմմանը.

• մասնակցել Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրմանը և դրանց վերաբերյալ Վարչության իրավասությունների սահմաններում մասնագիտական կարծիքի կազմմանը.

• կատարել «Քիմիական նյութերի և թափոնների կառավարման ազգային ակնարկի (պրոֆիլ)» վերանայման և նորացման աշխատանքներ:»:

1/15/2025

X

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Signed by: ATANESYAN SERGO 4007880425

Ս.ԱԹԱՆԵՍՅԱՆ

Երևան